

կայ եղան նորա բոլոր սարսափեցու ցեզ հետեւ անքներին:

Ե յագիսով ուշեմն, Կումի և Կումի աշխատատիւները տոց են առաջիւ որ պարաներու մաշակերաների տանձնանալու համար ձեռք տուած բոլոր խիստ միջնուները արդիւնաւոր հետեւնք չեն կարող ունենալ: Միւս կողմէց այդպիսի միջնուները անհրաժեշտ են մինչեւ անգամ արտիստամայի չտփ ոչ ժամանակաւոր բացց տարափոխիկ ֆուլիկուլեարնի բորբոքման ժամանակ Հաստրակ Փօլիկուլոց երեք վասնգաւոր չկարող լինել այլ պէտք է ձեռք տանել բժշկական ամենահաստրակ միջնուները:

Տրտիսօմն խիստ տանձնութիւն չեւ պահանջում նորա առաջն առնելու համար հարկաւոր են մշատկան վերահսկողութիւն և տանձնն բժշկութիւն: Աւստի աշքի առաջ ունենարով ու ի ֆուլիկուլեարնի բորբոքման տարափոխիկ յատկութիւնը անհրաժեշտ է գոլորոշների վերայ առ առնձնապէս սիստեմատիկական բժշկական վերահսկողութիւն ունենալ: Եթէ զանազան պատճառներով այդպիսի վերահսկողութիւն կարելի չէ, այդ գէպքամ բժշկը պարաւոր է ուշք դարձնել արտիստայով կամ ֆուլիկուլեարնի բորբութմավ կատկածնելի հիւանդա աշակերտան թողնել դպրոց միմիւայն բժշկական ամենախիստ բընութիւնից յետոյ և ապա ենթարկել նայն բժշկի մաս կանոնաւոր բժշկութեան:

զ. շ.



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՎԱՆԻ ԱՌԱՍՊՈՅԵՐՆԵՐԸ

Մ Խ Ո Ր Ե Ն Ա Յ Ա Յ

ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՀ

(ՔԱՆՈՒԹՈՑՈՒԹԻՒՆ և ԱՌԱՍՊՈՅԵՐ)

(Հայունակորիսն) *



ի.

Գ Ա Հ Ա Վ Կ Ե Բ Ա Բ Ա Ս Պ Ե Լ Ը.

Վիշապ եւ ամպրոպային կոիւ: — Առասպելարանութեան միջ վիշապը փոթորիկի պըտուահողմի և փոթորկալից ամոցի անձնա-

ւորումն է: Հենց ինքը փոթորիկը՝ պատահացմին ու ամնըր մի չար ոգիս որ սպորտարար օձի կերպարանքով է ներկայանաւում: բայց և զանազան կերպարանքներ է բնագունում: Նորա գէմ կուռում է նոյն օգերեալի բարի անձնաւորումը միջնադրութիւն առաջաւոծրութիւն որը նոյն պատահազար կերպարանքներով է պատկերանում:

Ի՞նչ է վիշապը հայոց մէջ: «Վիշապ» բառը, որ ժողովրդի մէջ նաև «ուշապ» է արտասանուում: Հաւանաօրէն իրանացիներից է անցել հայերին և պարսից ամպրոպային օձի Ամրիի մակղիբն է: Եւ արդարեւ ամեն նշ որ Հնաւումը և այժմ հայոց մէջ պատմուում է վիշապի մասին: Ներկայացնում է նորան իրեւ փոթորիկի ամպրոպի անձնաւորում: Շատ բան, շարկաւ մութն է, բայց բաւական է, որ մեր զբոցները համեմատենք ուրիշ ազգերի զբոցների հետ: որ մեր վիշապի ամպրոպային բնաւորութիւնը պարզուի:

Ամենից առաջ բերենք մի հատուած: որ չ. Ալիշան² վիրագբում է Անանիա Շիրակացուն կամ մի ռուբիշ հին բնախօսիւ: «Յագագս փոթորիկ հողմոյ, զոր ի բաջազնս և յառասպելո վիշապ հանել ասեն, փոթորիկն հողմ է: որ ի յերկրէ ի վեր ելանէ, ուր վիշք ինչ հատեալ մինին ի քակ և ի խոռոշացեալ տեղեաց ինչ, որ ի փող անկեալ ընդերակու երկրի, և ինչ հին գտեալ միաժողով ի թանձրացեալ ամնով ահազին զպրիւնս առնէ, մինչև զմայրիս յարմատոց ի բաց հանել, և զինչ գտանէ, ահազին ձայնի վերացուցնէ, և ընկենու յերկիր, և այս է զոր վիշապ հանել ասենոյ: Սայն աեզում բերած է, և վանական վարդապետից: «Յայլ և այլ կողմանց հողմ շնչէ, և ընդ իրար զիսպի, այն Փոթորիկ սսիր թէ: ոչ յաղթեն զիրար՝ ոլորին ընդ իրար, և ի վեր ելանեն: ախմայք զայն տեսեալ՝ վիշապ կարծեն կամ այլ ինչ: Սայն զրբի մէջ եր, 153 բերած է «փոթորիկ» մասին Սարկուագ վարդապետից, «Առասպելական ստութեանն ունկն զնել և

1. H. Hübschmann, Armenische Grammatik I, hr. 247.

2. Հին հայուսի, հր. 66. Ման:

յաւատավ մի' երթեք յանձն առնուցուս զիշապ զնա անռաւանզաց:

Այսպէս մեր բաջապահքներին և առասպեկներին մէջ վիշապը ներկայանում է պարզապէս իրրեւ փոթորկի, պառաւատհողմի, ինչպէս և փոթորկալից ամպի անձնաւորում: և միանգամայն իրրեւ փոթորիկ ու պառաւատհողմ՝ «թանձրացեալ ամպով», նման յունաց ջրեփոնին (Դաֆն), որ նշանակում է պառաւատհողմ: փոթորիկ կայծակներով ու որոտմունքով, և միանգամայն մի առասպելական էակ է օձանման: մի վիշապը որ «իւր հրեցէն շնչով և ամպերի ծխով կամ շոգիով լցնում է երկինքը» և իրրեւ ամպուպային վիշապ է ներկայանում: Նա մերթ իրրեւ երկրի որդի է երեւում: մերթ երկնային դիցուհի Հերացի որդի ... տռաւելապէս սակայն երկրածին է, ինչպէս բոլոր ամպրոպային էակները՝ գիգանտներն ու վիշապների ամբողջ սերունդը, որ երկինքի գէմ է ենում: զի երկնից, այսինքն հորիզոնի վրայ են բարձրանում նոքա: ինչպէս զեռ ասում ենք, «փոթորիկ է բարձրանում»:

Այս գալարուող վիշապը՝ Ծիւփոն, որից ծնունդ են առնում բոլոր չար հոգմերը, Հեղինդի թէոգոնիայի մէջ նկարագրուած է իրրեւ հարիւրզլիսանի օձ: որի աչքերից ու զլուխներից բոցեղէն ձառագայթներ են ենում: Հայեացքն այրում է կրակի պէս: հանում է զանազան հրաշալի ձայներ: մերթ կատաղած ցուլի նման բառաջում է խուր: մերթ առիւծի նման մննչում: մերթ շների նման հաջում կամ սուր սուլուցներ հանում: ² Այսպէս և մեր վիշապը, իրրեւ փոթորկի կամ ամպի էակ: Եղնիկի մէջ «կեզծո ի կեզծո է լինում» (եր. 102) այսինքն զանազան կերպարանքներ է ընդունում: մի անգամ օձաձեւ է երեւում: միւս անգամ մարդակերպ (եր. 106): երբեմն իրրեւողաւ ու ջորի կամ այլ գրաստ: և երբեմն իրրեւ որսի ետերից ընկած ձիաւոր (եր. 107): Այլ և վիշապի մասին պատմում է Եղնիկ (եր. 103, 106) թէ կալերից ցորենը գողանում է և գրաստի վրայ բարձրած կամ ինքը

գրաստ դարձած առնում է: Նոյնը պատմում է շատ ազգերի զրոյցների մէջ վիշապի մասին: իբրև փոթորկի կամ ամպրոպի անձնաւորում: ¹ կամ գերմանացոց մէջ արոլի մասին: որ պառաւատհողմի անձնաւորումն է: ²

Միջին գարերում արգէն վիշապի տեղ ստանան է անցնում: և «փոթորկի մէջ իշխող սատանացի պատկերացումը զեռ մնում է պառաւատհողմի վրայ կապուած»: ³ շատ ազգերի մէջ, ի թիւս որոց և հայոց մէջ, քանի մեր ժողովուրդը պառաւատհողմն ու «վիշապ հանելն» այժմ կօջում է: «սատանի քամի»:

Այսուհետեւ վիշապների մասին պատմում է մեզնում թէ: «զառհմականս անդեռոց ծծեն», ⁴ կամ կովերի կաթը ծծում են, և թէ վիշապների բերանից թռւնաւոր շոգի է գուրս գալի: որ վնասում է անասուններին ու մարդոց: ⁵ Այս գծերն ես ուրիշ ազգերի մէջ փոթորկի վիշապի: կամ պառաւատհողմի անձնաւորումի մասին են պատմում: ⁶ ինչպէս և թէ մեր և թէ ուրիշ ազգերի զրոյցների մէջ վիշապների բնակուելը բարձր սարերի վրայ և քարայրերի մէջ առնուած է պառաւատհողմի երեսյթից և ամպերի յատկութիւնից:

Թօղնում ենք վիշապի մասին պատմուած ուրիշ զրոյցները: որոնց մանրամասնութեան մէջ մտնելու տեղը չէ: Բերածներից արգէն պարզ երեւում է: որ վիշապը մեզնում ես փոթորկի: պառաւատհողմի կամ փոթորկալից ամպի անձնաւորումն է:

Այդ առասպելներից մեզ համար արժեք ունի պիշապ հանելը: կամ «վիշապի վերանալը երկրից երկինքու ինչպէս զրում է Աւհրամ վարդապետ»: ⁷ Դա ամպրոպային կախն

1. F. Schwartz. Poetische Naturansch. II. tr. 89:

2. Manhardt, der Baumkultus, tr. 69, 127, հանդիս. Antike Weland und Feldkulte, tr. 94. Leistner, das Rätsel der Sphinx II. 275. 281.

3. F. Schwartz, Ursprung der Mythologie, tr. 30:

4. Աղջամ, չին Հաւաս, tr. 194:

5. Հմես. Եղնիկ, tr. 107:

6. Manhardt, German. Mythen, tr. 48. Նոյն Անտիկա wald- und Feldkulte, tr. 103. Schwartz, Poet. Naturansch. II. 164. Նոյն Ուրսպրունգ 30. 31.

7. Աղջամ, չին Հաւաս, tr. 172. «Յորդ մար-

1. F. Schwartz, Ursprung der Mythologie, tr. 30:

2. Նոյն, tr. 30 հաս:

է: Տեսանք, ինչպէս յունաց մէջ Տիւփոնն ու զիզատները երկրից վերանում են երկինք, նորա վերանում են յատկապէս ամպրոպային Զեսի գէմ կոռուելու որ և իւր հոյժակներով խորտակում է ու ցած զլորում նոցաւ Գերմանների մէջ ևս Որոսը (donner) կամ թռող Հայածում է պատուահողմի անձնաւորումներին՝ արովներին և ուրիշներին. և Զեսի կոխուը Տիւփոնի գէմ նոյն է՝ ինչ որ նորան համագատատասխանող գերման զրոյցի մէջ թռոսի թշնամութիւնը արովների գէմի Որոսինը վալդվայրների (waldweiber), գեկիրի (Riesen) և ուրիշների գէմ։²

Բայց ի՞նչ է այդ կոխուը—Վիշապը պըտուահողմի կամ ամպրոպի չար անձնաւորումը: Իւր ընկեր չար ոգիների հետո իրեւ Հոդմ մը անձրացեալ ամպով բարձրանում է, արեգական լուսոյ երեսը կարում: Կամ փոթորկի մէջ յարձակում է արեգական վրայ, որ իրեւ աղջիկ է անձնաւորումն և յափշտակում նորան. ³ Կամ ուրիշ առասպելներով երկնային անձրեարեր ամպերի ջրերի առաջը կարում է և վայր հոսելն արգելում է՝ անսնց առաջ ցամաք ամպերի լեռներ ու բուրգեր կանգնելով: Իսկ փոթորկի կամ ամպրոպի աստուածը, որ մի և նոյն օգերեւոյթի բարի անձնաւորումն է, ինչպէս Հնդկաց մէջ ինդուան, երբեմն և Ագնին, հոյժակներով ու որոտմունքով, Մարուաների (Հողմերի անձնաւորում աստուածներ) հետ կոռուում է վիշապի և նորա չար ոգիների գէմ՝ խորտակում նորա բուրգերը կամ լեռները սպանում նորան և ազատում արեգակն և կամ ջրերը վայր հոսեցնում:

Այսպէս և մեր ժողովրդական զրոյցների մէջ «մեծ վիշապը» հայածում է արեգակը. Նա ջարոց հետ փոթորկի ժամանակ երկինք է վերանում արեւը, որ իրեւ աղջիկ է պատկերանում, կուլ տալու կամ նորա գէմ հակառակիլու, որ մարգիկ նորա զյս երեսը

զիկ տեսեալ են զի վիշապ վերանցը յերկը յիշենս:

1. Manhardt, Baumkultus, hr. 149.

2. Manhardt, Ant. Wald—und Feldkulte hr. 102.

3. N. Schwartz, Indogermanischer Volksglaube,

hr. 112.

չականեն: Բայց Դարրիկէլ Հրեշտակը՝ ուրիշ հրեշտակների հետ ելում է նոցա զէմ և կռւում: Որուն այդ կռւուի ժխորն է, վայլակը Դարրիկէլի թրի վայլքը, կայծակը նոր նետը և ծիածանը նորա աղեղը: ¹ Նոյն ու ուստիկեն ուրիշ ձեռով պատմում է թէ թեաւոր վիշապը, երբ մեծանում է, վտանգաւոր է դառնում: Բայց այդ ժամանակները նորան երկրից վեր են հանում փոթորկի ժամանակ վիշապը կռւում է նոցա հետո: Հուր շնչում և ջուր փչում երկրի վերայ: Կռուից առաջանում է փոթորկի շառաչիւնը: Բայց Հրեշտակները շարունակ ծեծելով վեր են հանում նորան, մինչեւ արեւի մօտ, որի կրակն այրում ու մոխիր է գարձնում նորան և մօխիրը թափում է երկրի վերայ: Կամ երկնքի բարձրութիւնից թողնում են որ ընկնի գետին ու մանր մանր փշրուի: ²

Շատ պարզ է, որ Հրեղէն պատմանի Դարրիկէլ Հրեշտակն իւր կոյժակով և աղեղով՝ ամպրոպային կռւուի մէջ փոխանակել է քրիստոնէութեան ժամանակ հեթանոսական ամպրոպային աստուծունն: Հրեղէն պատմանեակ Վահագնին, որի կռիւն ևս վիշապների գէմ իրեւ այսպիսի ամպրոպային կռիւ է ըմբռանուած, քանի որ մի կողմից վիշապն ամպրոպի կամ փոթորկի անձնաւորումն է: Իսկ միւս կողմից՝ Վահագն ամպրոպային աստուծու յատկութիւններ ունի երգի մէջ: Թէ իրօք այդպէս էլ եղել է, այսինքն Վահագնի կռիւը վիշապների գէմ մեր հին ու նոր ժողովրդական հաւատալիքի համեմատ ամպրոպային կռիւ է եղել այդ ցոյց է տալի մեզ նաև նորա վիշապաբաղ մականունը:

Վիշապաբաղ:—Ի՞նչ է նշանակում՝ Վահագնի այս մակդիրը, որ կայ Ագաթանգեղոսի մէջ: Անշուշտ, ոչ վիշապ ու քաղ (Drache—Bock), ինչպէս թարգմանում են կամ բացարել են ու զում ումանք, ⁴ քանի որ աւան-

1. Հմես. Գրոց Բրոց, hr. 109. Ազգագրական թիր. II, hr. 220:

2. Հմես. Արտամանձեամ, Գրոց Բրոց, hr. 92. Ազգագրական թիր. I, hr. 351. Հմես. M. Abeghian, Der armenische Volksglauhe, Leipzig, 1899, hr. 77—82:

3. Justi, Iranisches Namenbuch, Marburg, 1895. Ալիշան Հմա Հաւասի, hr. 153. 173:

բուած կայ Վահագնի կոիւր վիշապների դէմ բայց և ոչ «վիշապասպան» կամ «վիշապ խեղպլը», ինչպէս թարգմանում են բառ Ազաթմանգեղոսի յունարէն թարգմանութեան: Բառ իմաստի անշուշտ ուղիղ է այս վերջինից զի Վահագն: յազմում և վիշապներին: բայց «վիշապաքաղ» բառը բառացի ոչ վիշապ: ապանող է նշանակում և ոչ «խեղդող»: քանի որ «քաղել» բայի «քաղ» արմատն այդ իմաստները չունին:

Քաղել Հայկ, լիզուի Նոր Բառզբի մէջ բացարած է, ի միջի այլոց «Ժողովիլ» խլել հանել: ² իսկ այդ բայի քաղ արմատը բացարած է: «Քաղելի խոա անպիտան և վնասակար»: Այս իմաստով «քաղ» բառը գործ է ածւում և ժողովրդի մէջ, օրից և բազազրեալ բայը՝ բաղը տալ, կամ քաղնանել, որ է ցանքի միջից վնասակար խոտերը կտրել հանել: ժողովիլ: Աւելի գործածական է նոյն իմաստով կրկնուած քաղնան(թ) բառը: Այս իմաստի վրայ պէտք է աւելացնել և ժողովրդի մէջ գործածական վեր քաղել ձեզ, որ նշանակում է հանել, վերջացնել, վերցնել և գործ է ածւում նաև հմայութեան մէջ, օրինակ «վախը վեր քաղել»: Այսպէս և ասում են և «Ամպու չանզը վեր է քաղում»: այսինքն քաշում վերտոնում, բարձրանում է: «Քաղել» բայի այս նշանակութիւնն անշուշտ նոր չէ, քանի որ նոյն վեր հանելու, վերցնելու, բարձրացնելով ժողովիլու իմաստը կայ արդէն և միայն «քաղել» բայի մէջ, օրինակ «Քաղելին զվարանս ի ներքոյ սեղանոյ» (Դատ. Ա. 7): Այսպէս և հասկաքաղ (հասկերը գետ-

¹. Hübschmann, Armen. Grammatik. I. 76. II. Gelzer, Zur armen. Götterlehre, tr. 104:

². Հանել Աշանակարիամբ: «Ա յա դ կ զնոցիս իշանաց» (Սաղմ. Ձե. 13). «Կայր ի տարակուսի և յա դ կ ի Ա ոդիս նորա»: (Յազմամ. Գ. 8): Հայկ, լիզնոր Բառցրի մէք նահ: «Ակատ ոյի նորա յա դ ի ի նմանեց»: «Գիրկու արկանեն ի նա յադ զշումն իրա: Իսկ իմաստով ն ա ն ե լ բայի ներկենուած: «Ք ա դ ե լ հ ա մ ե լ զշումն նորա: (Եւսեբ. պատ. է. 1): Եղիշէի մէք (Ա. յիկ. Խ. 9): Զի կոյէս ի խորհուրդ զայնոսիկ՝ որոց դոգիս մէնք յա դ ե ա լ հ ա մ ե ա լ է զանապական յապականութիւն: Եղիշէ (Խ. 253): «Ե պաշտամաց Հոգում սրբոյ յա դ ե ա լ հ ա մ ե լ, զիկս տեսարակի ընթել տանու ի զիկս իրեւ խոսմ ի բաց բողոք:»

նից վերցնելով՝ ժողովող) սերմանաքաղ: «Քաղել զոջիլ» ձեւերի մէջ: Կոյնապէս և «Քաղելով գործեսցես զտապանն» (Ժննդ. Զ. 16), որ արդէն Հայկ, լիզ: Նոր Բառզբի մէջ, համեմատած յունարէն էլուսունացու բառի հետ, թարգմանած և վերաժողովելով:

Արդ վիշապաքաղ բառացի նշանակում է վիշապ հանող վիշապ վեր բաղող կամ ցածից վերցնելով ժողովող, այլ և վիշապ բաղնանող, այսինքն, ինչպէս քաղհանքի ժամանակ, վնասակար վիշապները հանող վերցնող: Որ նշանակութիւնն էլ որ առնելու լինինք, «վիշապաքաղ» բառն արտայայտում է մեր հին ու նոր ըմբռնումը, թէ վիշապները երկրից քաղհանւում հանւում վերցւում վերանում են: Հանիկն (Խ. 107) այդ իմաստը յայտնում է բառնալ բայով: «Եթէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն: ուրիշների մէջ նոյն երկոյթն, ինչպէս տեսանք, բառնալ, բայի համանիշ հանել բայով և արտայայտուած: «Վիշապ հանել», կամ վերանալ բայով: «Վիշապ վերանայր յերկրէ, յերկինս: կամ Սըրուանձաեանի մէջ բաշուել վեր քաշել բայով: «Վիշապը լեռներէն երկինք կը քաշուի», կամ «ըրեշտակները վեր կը քաշեն վիշապները», այլ նոցամիջից առնելով մի տեսակ քաղհանքով: նոցամունք հազար տարեկան սարսափելի մեծացած և վտանգաւոր են, և կարող են «երկիրը կուլ տալ», իսկ աւելի հին ժամանակ նոյն վիշապ հանելն արտայայտուած է քաղել քաղ բառով, որ և նոյն իմաստն ունի, ինչ որ բառնալ վերցնել, վերանալ, հանել վեր քաղել, ևլն:

Եզրակացութիւնը պարզ է: «Վիշապաքաղ» մակղիրը ցոյց է տալի: որ մեր հին հաւաքի մէջ Վահագնի կոիւր վիշապների դէմ ըմբռնուած է իրրե վիշապ հանել», որին, Եղնիկի ժամանակից մինչեւ այսօր, հաւատում է մեր ժողովուրզը: Իսկ վիշապ հանելը, ինչպէս տեսանք ամսուապային կոիւն է, որ ամսուապային աստուածը մզում է փոթորկի մէջ վիշապի դէմ որ: ինչպէս ուրիշ ազգերի, այդպէս և մեր հին ու նոր հաւատալի-

³. Մուտանձեմն Գրոց Բրոց, Խ. 92: Տ.:

քով ամպրոպի, պառատահազմի և փոթորկալից ամսի անձնուորութիւնն է: Եւ ի՞նչ է «լեռներէն վիշտապներուն երկինք բաշուելլ» կամ «վիշտապաքաղութիւնը» եթէ, ոչ մի աւասպելական արաայտութիւն միայն փօխանակ սովորական ասացուածի թէ, «ամպ ու շանզը վեր է բաղուում լեռների վերաբ:

Վահագն: Վերեթրազնա: — Վահագնի պաշտամունքի՝ իրանացիներից հայերին անցած լինելը և նորա անուան նոյն լինելը իրանական յաղթութեան աստուած Վերեթրազնայի անուան չեա՝ վաղուց ապացուցուած է:¹ Արդ Վերեթրազնան բացատրում են թէ սկզբնապէս ամպրոպային աստուածութիւն է եղել:² Թռէպէտե պարսից Վերեթրազնայի համար յիշատակուած չկայ վիշտապների դէմ կոիւը, որ յատուկ է բոլոր ամպրոպային աստուածներին, «բայց և այնպէս նա ծշտիւ պահպանել է չին Վրտրահան [Վրտրա սպանող վիշտապասպան] աստուածների բոլոր առասպելական և ֆիզիկական գծերը»:³ և սկզբնապէս ամպրոպային աստուած է եղել Վերեթրազնան որի անունն իսկ ննդրայի մակդիրն է՝ Վրտրահան: Թոյլ ձեռվ ձայնաւորներից առաջ՝ Վրտրադշնա:⁴ Արդ քանի որ մեր Վահագնի անունն աւ պաշտամունքն իրանցիներից է անցել հայերին, շատ պարզ է, որ անցումն եղած է իրանական Վերեթրազնայի նախնական ամպրոպային յատութիւններով հանդերձ, որոնք երեւում են մեր Վահագնի մէջ:

Պարսից Վերեթրազնան, իրրե ամպրոպային աստուած, ներկայանում է բազմատեսակ կերպարանքներով. իրրե պինդ քամի, իրրե ցուլ ժիւ ուղու, տասնուշինդ տարեկան զեղեցիկ, փայլուն պատահակ, այլ և իրրե թռչուն, վարագ քաղ և տղամարդ: Նոյնպէս և Ծիստիան, իրանական ամպրոպային աս-

տուածը երեւում է զեղեցիկ պատանեակի, արջառի և ծիռ կերպարանքով: Խնդրան երեւում է յաճախ իրրե ցուլ: Յուլի կոիւը վիշտապի հետ փոթորկի ժամանակ կայ և զերմանական առասպելարանութեան մէջ:⁵ Թէ մեր հին հաւատաքի մէջ ևս ամպրոպային աստուածը, զանազան կերպարանքներով երեւցած պիտի լինի: անհաւանական բան չէ, քանի որ ամպրոպային աստուածներն այդպէս են երեւում: մանաւանդ որ մեր հին ու նոր հաւատալիքների մէջ գտնում ենք ամպրոպային էակների համար նոյն կերպարանքները: Ամպրոպային վիշտապի իրրե ուղու, ծիաւոր կամ ձի, ջորի երեւելը տեսած ենք, և թէ ինչպէս որոտացող էակը պատկերանում է իրրե քամի, կով, և որ զիսաւորն է, Եղնիկ (եր. 108) գրում է. «Եթէ քառնայցի ի վեր այնպիսի վիշտալը, ոչ եթէ եզամքը ինչ անուանելովք՝ այլ ծածուկ զօրութեամբ իւիք, ..., որից պարզ երեւում է, որ «վիշտապ հանող» կամ «վիշտապադ» այսինքն վիշտապ բարձրացնող էակը ներկայացել է և եզան կերպարանքով: Սակայն վիշտապաքաղ Վահագնի համար յիշատակուած է միայն հրեղէն փայլուն պատանեակ կերպարանքը:

Վահագն, Հերակլէս: — Խորենացին երգի վերջի բովանդակութիւնից Վահագնի կոիւը վիշտապների հետ և յաղթութիւնը բերելուց յետոյ աւելացնում է. «Եւ կարի իմն նմանագոյնս զէերակլեայ նահատակութեանցն նըմա երգէին»:⁶ Այս հատուածի քերտականական կազմութիւնը մեզ համար պարզ չէ: Հ. Ստեփանէն թարգմանում է. «Հերակլի քաջագործութիւններին շատ նման գործեր են երգում նորա մասին»:

Հերակլի նահատակութիւնները կամ առասպեկները շատ բազմազան տարրերից են կազմուած: որոնցից շատերը զանազան ազգերի մէջ են գտնուում: ի թիւս որոց և իրանացոց մէջ: իրանական կերեսասպայի (կերեսար)

^{1.} P. de Lagarde, Armenische Studien, Göttingen. 1877. եր. 141. H. Hübschmann, Armen. Gramm. I. եր. 75. H. Gelzer, zur armen. Götterlehre եր. 104 էտի:

^{2.} Poit, Etymologische Forschungen, II. 3, եր. 557. Spiegel, Eran. Alterth II. եր. 98:

^{3.} Darmesteter, Ormazd et Ahriman, եր. 125.

^{4.} Grassmann, wörterbuch zum Rigveda.

^{1.} E. H. Meyer, Germanische Mythologie եր. 97, 104.

^{2.} Մայր Արորի գրադարանի Մ. 8. № Ա: 1686. 1669, 1665, 1671, 1672, 616. Անտիկան ընթերցուածն ունի. «Եւ կարի իմն նմանագոյնս զէերակլեայ առ համական կուրիւմ և մետ երգելոյ»:

արարքները, օրինակ, ահազին վիշապ Սրուար (Sruvar) օձին սպանելլը, համեմատում են Հերակլի արարքների հետ, և նոյն իսկ Տրիտոն կերեսապա, Հերակլէս, Թոռ, Խնդրա և ուրիշները, իրրև կայծակի հերթաներ կամ աստուածներ իրենց առասպելներով հաւասարում են իրար, ² Մաքս Միւլերն արդեն վաղուց ապացուցած է, որ Հերակլէսի արարքներից մէկը՝ որով նա սպանում է հսկայ Գերիսնէսի արջառը (ամպերի հօտը) պահպանող շունը, ոչ միայն նոյն ինգրայի քաջագործութիւնն է, այլ նոյն իսկ շան անունը՝ Օրթրոս ստուգաբանօրէն նոյն է, ինչ որ Խոզայի թշնամի Վրարայ: ³

Արդ, եթէ, Հերակլէս ներկայանում է, իրրև կայծակի հերոս, շատ բնական է, որ Հելլենիստական ժամանակներում երր յունաց ազգեցութեան տակ տեղական աստուածները ոչ միայն հայերի, այլ և ուրիշների մէջ յունական աստուածների հետ նոյնանում էին և յունական անուններով կոչուում մեր Վահագն հաւասար դասուեր Հերակլին, ինչպէս և եղել է իրօք: Այդ գէպքը միակը չէ պատմութեան մէջ. համանման մտածութեամբ և գերմանական ամպրոպային աստուած Թոռոր կամ Դոնար հռոմայական ազգեցութեան տակ նոյնացել է Հերկուլէսի հետ: ⁴

Պ. Խալաթեանը դրում է. Վահագնի, աւեստական վերեմրազնայի, և Նորա նահատակութեանց մասին զրոյցները, ինն հայոց աշխարհայեցողութեամբ, պէտք է իւրատեսակ, անկասկած, իրանական երանգ (Կոլորիտ) ունենային, ուստի և պէտք է նշանաւոր կերպով տարբերուեին յունական առասպելներից Հերակլի մասին. բայց այս երկու աստուածների արտաքին այսպէս ասած, զրական մերձեցման իրողութիւնից էլ հենց բոլորովին քմահաճոյ եղրակացութիւն է անում հայպատմագիրը, ⁵ այսինքն Վահագնին վերա-

գրում է իրենից Հերակլի նահատակութեանց նման բաներ: Պ. Խալաթեանի պատճառ արանութիւնը՝ սակայն սշինչ չէ ապացուցանում: Հայոց Վահագնի մասին առասպելների ոլորտական կամ շունենալլը բնաւ չէ խանգարում, որ նա ունենար Հերակլի նահատակութեանց նման արարքներ: Առասթելարանական զիտութեան այժմեան դրութիւն ժամանակ, երբ իրարուց աեզզով ու ժամանակով հեռու ազգերի առասպելների ու հաւատալիքների մէջ այնքան շատ և ամբողջական նմանութիւններ են զանում: Երբ եղիպատական առասպելները ոլաւ ոնների մէջ, ինն հնդկական զրոյցներն իսլանդացոց մէջ են գտնում և նոյն իսկ Հերակլի առասպելներն ուրիշների հետ և իրանացոց մէջ: — միթէ անհնարին բան է, որ հայոց մէջ ևս Հերակլի արարքների նման բաներ պատմուած լինէին մի աստուծու մասին, որ նոյն իսկ նոյնացել է Հերակլի հետ:

Եթէ այդ նմանութիւնը չէ եղած, հապա ինչով պէտք է բացարել Վահագնի նոյնացումը Հերակլի հետ: Պ. Խալաթեանը խարուսիկ բացարարութիւն է միայն տալի, այդ նոյնացումը կոչելով «արտաքին, այսպէս ասած, զրական մերձեցում» մինչդեռ այդ նոյնացումները, որ Հելլենիստական կամ Հռոմայական ժամանակներում եղել են զանազան ազգերի մէջ, լոկ արտաքին ու պատմահական չեն և ոչ ել միշտ զրական» մերձեցում: այլ որևէ և ներքին նմանութեան վրայ հիմունած: Ինչու Միհր ծիւր կամ Արտամզդ չեն նոյնացել Հերակլի հետ: այլ միայն Վահագն: Միթէ արտաքին և պատմահական է որ Արտամզդ Դիոսի հետ, Միհր Հեփեստոսի հետ, Անահիտ Արտեմիսի հետ և Տիր Ապոլոնի հետ են նոյնացել. թէ՛ որևէ և ներքին նմանութիւն կայ այդ աստուածների մէջ: Նմանութիւններն անշուշտ կան: և այդ նոյնացումներն աւելի բան ել են ցոյց տալի: «Այս կատարելապէս հաստատութիւնը եղրակացներ և տալին որ վաղուց ի վեր գործածութեան մէջ էր այն և թէ մատենապելներն ժողովր-

1. Spiegel, Eran. Alterth. I. 561 հս:

2. E. H. Meyer, Indogerman. Mythologie II. եր. 552 հս:

3. Kuhns Zeitschr. f. ugl. Sprachforschung V. 150:

4. Mannhardt, Germ. Mythen. եր. 235.

5. N. Meyer. Germ. Mythologie. եր. 202.

6. Խալաթ. Արմ. Թոծք եր. 204.

դի մէջ իշխող ստվորութիւնից են փոխ առած այն։ Կարծում ենք պ. Գելզերի այս նկատողութիւնը ճիշտ է, և եթէ նա Միհր—Հեփեստոս * քիչ յարմարու է համարում հայոց Միհրի բնութեանը լաւ ծանօթ շինելու պատճառով է, այդ։

Թէ վահագնի մասին, բացի վիշտապերի գէմ կոռից, և ուրիշ նահատակութիւններ են պատմուել անհաւատալի չէ այդ, քանի որ արդէն աւանդուած կայ մէկը՝ Բարշամի յարգը գոգանալը, որից և Յարգգողի ճանապարհն է, գոյացել որով անցել է Վահագն։ Եւ միթէ Կաթին ծրի ծագումը յունաց մէջ էլ, ինչպէտե ուրիշ ձեռք, Հերակլի մանկութեան հետ չէ կապուած, և դա այն ճանապարհը չէ, որով Հերակլ անցնում է, Գերիու արջառը։

Պ. Խալաթեանը բաւական չէ որ Խորենացու վզին կապում է, թէ իրեւ նա ասում է, թէ Վահագնի մասին երգը մի վիշտի հատուած է, այլ և առարկում է, հարցնելով այսպէս, «կարելի՞ բան է», որ Խորենացու նման մի մատենագիր ձեռին ունենար մի ընդարձակ ժողովրդական վէպը ամբողջ վիզատանութիւն (վեցյա թուու), հոյակապ քերթուած (գրանձօնյա ուօմյ) Վահագնի մասին, և որքան կարելի է լիակատար չօդառուէր նորանից» այսինքն շատ բան մէջ ընթերէր այդ վիշտից։ Իւր պատմութեան մէջ, Եւ շատպում է, պատմախանել «Ակնյայտնի է, որ ոչ»։ Արդարեւ շատ ճարտասանօրէն է առարկած պ. Խալաթեանը և մանաւ անդ աւելի ճարտասանօրէն նկարագրած է, թէ ինչպէս պատմացիրը ումեն յարմար միջոցից բռնում է, «իւր հայրենիքի պատմութիւնն աւելի փայլուն ու փառաւոր» դարձնելու համար։ Բայց և այնպէս նորա այդ ամրուշ առարկութիւնը² մնում է լոկ իրրեւ ճարտասանական ձեւ, քանի որ նա իրենից մի շինծու բան է ստեղծում ու վերագրում Խորենացուն և ապա իւր ստեղծածը հերքում։ «Ամրուշ վիզատանութիւն», ընդարձակ ժողովրդական վիշտից։

թուած» և կամ նոյն իսկ էմինի կարծիքը թէ, «Այդ երգի մէջ իրենց պատշաճաւոր տեղն էին բռնում և հայոց պանթէռնի միւս աստուածները»։ լոկ ենթադրութիւններ են և ընդունայն ենթադրութիւններ, իսկ պ. Խալաթեանի կողմից և միայն մի ճարտասանական ձեւ ուռեցնել ու պատառելու հետագա մինի:

Խորենացին ուղիղ չէ զրում վահագնի վիշտի մասին, ոչ էլ այդ «վիշտ» ընդարձակը, «ամրուշ» ու հոյակապ (գրանդիոզ) եղած լինելու մասին։ Մեր գիտցածը միայն այն է, որ Վահագնի ծնունդն ու արտաքինը նկարագրում է, մի երգի մէջ մի քանի տողով երեխի, մի քանի տողով էլ նորա կոփւր վիշտաների գէմ նկարագրուած կը լինէր։ Այդպիսի փոքրիկ երգեր էլ կարող էին և նորա միւս նահատակութեանց մասին եղած լինել։

Բայց ինչո՞ւ աւելի լիակատար» չէ օգտում պատմագիրն այդ երգերից։ Անո՞ր համար արգեօք, որ սուտ է, նորա գրածն, թէ չէ ուղիցել։ Եթէ սուտ է, միթէ զժուար է, Հերակլի նահատակութեանց մի երկու գեպքի բրփանգակութիւն յօրինելը «Ճարպիկ» Խորենացու համար, որին այդպիսի ընդունակութիւն, և այն ամենայն հանձարեզութեամբ վերագրում է, պ. Խալաթեանը։ — Շատ համարկականի է, թէ ինչո՞ւ պատմագիրն այդ երգերը մէջ չէ բերում։ Որովհետեւ նա պատմութիւն է զրում և ոչ թէ առասպելաբանութիւն։ իսկ մենք գիտենք թէ մեր պատմագիրը որպիսի արհամարհանքով է վերաբերում առասպելներին և յատկապես անոնց, որ գերբնական բաներ ունին իրենց մէջ։ Վահագնի մասին բերածը, խորենացու հայեացքով առասպելի վրայ ոչ միայն քիչ չէ, այլ և շատ է։ Ամբովինք մեր եղակացութիւնը Վահագնի և նորա երգի մասին։

Վահագն բատ ամենայնի ամպրոպային կայծակի աստուած է, համապատասխան ինդրային կայծակի աստուած Ագնիին, գերմանական թոռին, պարսից վերեթրագնացին, Ցիստրիային և լին։

1. H. Gelzer, Zur armen. Götterlehre, hr. 187.
2. Խալաթ. Արմ. Թուօւ, hr. 203.

1. Եմին, Ա. Խորենացին և հայոց հիմ վեպեր, hr. 38.

Ղահագն իրրե ամպրոպային աստուած ծնունդ է երկնքի ու երկրի, երկնային ծիրառնի [ամպերի] ծովի և երկնային բոյսերի՝ յառհապէս կարմիր եղեգնի, որ [ամպերի] ծովի մէջ բոցավառւում է, կայծակի աստուած Ղահագնի ծննդեան ժամանակի իրրե ամպրոպի աստուած՝ հրամազ, բոցամիրուք արեգակնաշեայ պատանեակ է:

Իրրե ամպրոպի աստուած ծնուելուն պէս վազում է, վիշապի կամ վիշապների գէմ իրուելուն Նորա ծնունդն ու արտաքին ամբողջապէս ընական օգերեայթից են վիրցրած կոփւն ևս օգերեայթի ամպրոպային կոփւն է, քանի որ նորա թշնամի վիշապն ամպրոպային օգերեայթի անձնաւորումն է: Նոյնն հաստատում է և վիշապաքղ մակղրափ, որ ցոյց է տալի թէ Ղահագնի կոփւը վիշապների գէմ մեր ժողովրդի մէջ հին և նոր ժամանակներում յարտնի «վիշապ հանելն» է: Իրրե ամպրոպի աստուած նա «քաջ» մակդիրն է կրում և քաջութիւն չնորհումն քանի որ ամպրոպային աստուածներն ինչպէս ինդրան ամենազօրն են, ուժեղ ու քաջ ինչպէս նորա պաշտամունքն ու անունը իրանացիներից է անցել հոյերին, այսպէս և նորա ամպրոպային յատկութիւնը քանի որ իրանական Վերեթրագնայ Ղահագն սկզբնապէս ամպրոպային աստուած է եղել: Նա իրրե ամպրոպի աստուած նոյնացել է Հելենիստական ժամանակներում Հերակլէսի հետ, այլ և մերձեցել է Ապոլոնին: Քանի որ վերջինս էլ ամպրոպային յատկութիւններ ունի, կամ թէ մեր Ղահագնի մէջ ևս տեսել են արեգական երեսիցը, զի ամպրոպի և արեգական երեսիցների անձնաւորումները, ընութեան մէջ եղած նմանութեան պատճառով, շատ ազգերի առասպեկների մէջ իրար փոխանակում են կամ իրար տեղ անցնում:

Ղահագնի երգը, որ բովանդակում է, այս հին առասպեկական ըմբռնումն ամպրոպի աստուածութեան մասին, հայոց հնագոյն ժողովրդական երգերից մէկն է, թէպէտե ուշ ժամանակ գրի առնուած:

(Հայոց պատճեանի վեպ)

Մ. Աթեղեան



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Կրակը չրի տակ: — Ամէն վառուող իր մի որոշքանակութեամբ թժուածին է պահանջում: և որովհետեւ առ հասարակ լնոցհանուրի հասկացողութիւնը թժուածնի մասին կապուած է մեղ շրջապատող օդի հետ, այդ պատճառով էլ շատ շատերի համար, անշուշտ ստարութի կերեայ իմէ ասելու լինիք: Թէ ջրի մէջն ևս կարելի է կրակ վառել: Սակայն գաղտնիքն այս է, քիմիական մի քանի միաւորութիւններ այրուելիս իրենց միջի թժուածնից պատճառում են և, հետեւարար, այդ տեսակ նիւթերի համար միւնցն բանն է, թէ ինչ միջավարում են այրուում և յայտն հասարակ վրայ է հիմնուած առաջիկայ հետաքրքիր փորձը: Աչ շատ հաստ և ոչ էլ շատ բարակ ստուարաթղթից (կարտոն) բաւականին երկար խողովակ են շինուած ու նրա զգաց մասերը սոսնձով կպցնում են իրար հետ Խողովակի ծայրից մէկը փակում են իսկ միւսից ներս են լցնում 10 մաս բերտուեան ազ: 9 մաս մանր ծեծած շարքը և 1 մաս ածութիւն և յա բոլոր նիւթերն իրար հետ լաւ խառնելուց յետոյ, պէտք է պինդ լցնել խողովակի մէջ, որպէս զի խառնութիւնը մի անգամից շրանկի: Յետոյ փակ կողմից մի ծանրութիւն կապելով վառում են բաց կողմն ու ջուրն են ձգում: Մուլթ զիշերները, պյառիսի փորձերի ժամանակ, կարելի է տեսնել ջրի տակը մանուշակագոյն կրակ: որի վառուելու տեսութիւնը կախուած կլինի խողովակի երկարութիւնից:

* *

Լեյին օմի կծածի նաևար անենարտ հակարոյնն է: — Ինչպէս ամէն տեսակ օձերի, այնպէս և որոշ կենդանիներից մի քանիսի լեզին օձի թոյնի համար ամենազօրեղ միջոցն է: Գիտութիւնն այս կիւտը պարտական է Լեզինուրդի համալսարանի ուսուցչապետ Ֆրազէրին: Թունաւոր օձերի վրայ իր կատարած երկարամեաց փորձերից յետոյ, նա յաջորդաբար պարզաբանեց հետեւալը: Թունաւոր օձերի լեզին չէզոքացնում է նոյն իսկ իրենց թոյնի զօրութիւնը, Ֆրազէրի փորձերի մէջ այնքան թոյնիը, որը փորձի ենթարկուած կենդանու կաշուակն է սրսկուում, կարող եր նոյն տեսակին պատկանող 1000 կենդանու թունաւորել: բայց ոչ մի ազգեցութիւն չի ունենում, երբ լեզին գէմն է զրուում: Օձի թոյնը, եթէ ներս ընդունուի, ոչնաշանում է ոչ թէ որովայնի հիւթի շնորհիւ: այլ լեզիին, և այն ոչ թէ ստամոքսի: հապա ազգիների մէջ, Առաջ Ֆրազէրն ենթագրում էր, որ այդպիսի հակառակուածուր յատկութիւններով օժտուած է միմիայն թունաւոր օձերի լեզին: Այդ պատճառով էլ իր փորձերի համար Ափրիկայի իժի: բաժոնուուր